ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության առողջապահության նախարարության միջև առոջապահության և բժշկագիտության ոլորտում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության առողջապահության նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,

նպատակ ունենալով իրենց երկրների միջև զարգացնել և ամրապնդել համագործակցությունը առողջապահության և բժշկագիտության բնագավառում,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը իրենց երկրների քաղաքացիական իրավունքների շրջանակներում, հնարավորության սահմաններում օգտագործելով երկու երկրների ժողովուրդների բազմադարյա համագործակցության պատմական փորձը, ջանքեր կներդնեն առողջապահության և բժշկագիտության ոլորտում երկարաժամկետ, փոխշահավետ և արդյունավետ համագործակցություն զարգացնելու համար:

Հոդված 2

Կողմերը կաջակցեն և կօգնեն երկու երկրների գիտնականներին, բժշկության և դեղագործության ոլորտների աշխատողներին առողջապահության, բժշկագիտության և դեղագիտության բնագավառներում գիտահետազոտական համագործակցություն ծավալելու հարցերում:

Հոդված 3

Կողմերը կխրախուսեն և կաջակցեն երկու երկրների բժշկության և դեղագործության ոլորտների հաստատությունների միջև ուղղակի համագործակցության հաստատմանը:

Հոդված 4

Կողմերը կկատարեն բժշկական և գիտական տեղեկության փոխանակում, մասնագետներ և գիտնականներ կուղարկեն Հայաստանում և Չինաստանում կայանալիք միջազգային կոնգրեսներին, կոնֆերանսներին, գիտական սեմինարներին և ցուցահանդեսներին մասնակցելու համար:

Հոդված 5

Սույն Համաձայնագրի կիրառման համար Կողմերը կստեղծեն համատեղ, մշտական գործող աշխատանքային խումբ, որը կմշակի և կընդունի երկու տարի ժամկետով իրագործման պլան: Այդ պլանը կընդգրկի համագործակցության կոնկրետ ծրագրերը և ֆինանսական դրույթները: Աշխատանքային խմբի նիստերը հաջորդաբար կանցկացվեն Կողմերի քաղաքներից մեկում:

Հոդված 6

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և կգործի 5 տարի ժամկետով: Այն դեպքում, երբ Կողմերից ոչ մեկը մյուսին գրավոր ձևով չի տեղեկացնում սույն Համաձայնագրի գործողության դադարեցման իր ցանկության մասին, սույն Համաձայնագիրը գործում է անժամկետ:

Կատարված է Երևան քաղաքում 1993 թվականի օգոստոսի 26-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, չինարեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1993 թվականի օգոստոի 26-ից: